

## Գիրք ԵՒ ՄԱՍՈՒԼ

### ՄԵՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

«Հայրենիք» ամսագիրը շարունակում է հայ մշա-  
ՀԱՅՐԵՆԻՔ կոյքի եւ պատմութեան վերաբերեալ քանզարժէք նիւթերի հրատարակու-  
րինը: Վրձանագրենք մի հանիսը: Վեր-  
ջին համարներում լրացան «Յովսէփ Մոլսէսեանի Յուշերը Կուկունեան Ար-  
շաւախմբից», որ այնպէս կենդանի կեր-  
պով գրի է առել Ա. Ամուրեանը: Այս  
յուշերի առաջին մասը, ինչպէս ասել ենք արդյուն, արժէքաւոր լրացում է Կուկուն-  
եան խմբի արշաւախմբ վերաբերող այն նիւթերին, որոնք լսյս տեսան նոյն «Հայրենիք»-ի յաւելած «Հ. Յ. Գ. Դի-  
ւան»-ում. վերջին մասը կարդացում է իրեւ արկածալիք: Ա. Գիւլիանդանեա-  
նի «Բագուի երկրորդ ընդհարումները» պատմագրի եւ սովորական ընթերցողի համար իիստ հետաքրքական նիւթեր են պարունակում: Գժրախտաքար, խմբա-  
գրութիւնը տալիս է փոքրիկ հատած-  
ներով, որպէս բռլացնում է տպաւրու-  
թինը: Ծրդ եւ ծրդ համարներում զե-  
տեղուած է դր. Ն. Մ. Պալտոյեանի «Ճե-  
պէլ Մուսա եւ հայ լեռնականները» յօդ-  
ւածը, որ նիշտ ժամանակին է երեւում.  
այժմ, երբ ամենինք գրաւած են վեր-  
ֆէլի վէպով, դր. Պալտոյեանի գրւած-  
քը, իրեւ փաստական լրացում, մաս-  
նաւոր շահեկանութիւն է ներկայացնում:  
Վ. Մինախորեանի «Արեւմտսան Հայա-  
տանի Պարպումը» (№ 4) ոռւսական պաշտօնական աղբիւրներից հաղած նիւ-  
թի մշակումն է եւ, որպէս այդպիսին, հետաքրքական է, թէեւ մասամբ ար-  
դէն ծանօթ հայ ընթերցողին:

Զենք կարող գուունակութեամբ չար-  
ձանագրել, որ «Հայրենիք»-ը սկսել է հրատարակել Զ. Աւալովի «Վրաստանի անկախութիւնը» հատորի քարգմանու-  
թինը: «Վէմ»-ում մենք էլ սկսել էինք հատածներ տալ այդ կարեւոր գործից: Այժմ, երբ ամբողջը լսյս է տեսմում «Հայրենիք»-ում, մենք կարող ենք չշա-  
րունակել: Թարգմանութեան լեզուն, դժբախտաբար, քերի է: տեղ-տեղ նոյն խսկ իմաստի խամգարում է պատահում, կամ բոլորովին անհասկանալի է: Օրի-  
նակ, ի՞նչ է նշանակում «Հաշտութեան ու բարեկամութեան համաձայնագրի Օս-  
մաննեան Կայսերական Կառավարութեան և Անդրկովկասի կոնֆեդերատի հան-  
րապետութեան տաճկական նախագիծը» (№ 3, էջ 77): Կամ ի՞նչ հայերէն է այս նախադասութիւնը: «Զորիների մի խումբ պատահեցին մեզ իրենց հակերով և իրենց առաջնորդներով, որոնք հազի-  
թէ, այլ լինէին այն օրերին, երբ մեր երանելի հայր Գրիգորին՝ Խանդղապայից, այս տեղերում, վրացական Կլարչիտսի-  
թիվակայում, միւս միանձնաւորների հետ, աղօթում էր մեր մեղքերի համար, տեղի քան հազար տարի առաջ» (№ 3, էջ 87): Այսպիսի լարսու-ները կոտ-  
րում են գործի արժէքը:

Հայագիտական այս «Ռւ-  
ՀԱՆԴԵՍ սումնարերը»ի յունար -  
ԱՄՍՈՐԵԱՅ փետրար միացեալ համա-  
րը, իր նախորդների պէս խնամւած ու լուրջ բռվանդակութիւն-  
ունի: Այս համարից սկսում է Սարու-  
խանի «Ֆիրդուսի եւ Մ. Խորենացին» յօդածը, ուր հեղինակը իր հիացումի

տուրքը տալով պարսիկ մեծանուն բանաստեղծին՝ քննութեան է առնում Խորենացու յարակցութիւնը Յիրդուսի երկի հետ եւ մի շարք հետաքրքրական գիտողութիւններ է անում: Յօդածը շարունակելի է: Շարունակում է նաև Սարուխանի «Բեկիա եւ հայերը» աշխատութիւնը: Վերջացել է «Սիմեոն Դարի Լեհահայոց ուղեգործիւն» ընդարձակ եւ հայոց պատմութեան համար շատ արծեքաւոր գործը Հ. Ն. Ակիմնանի ծանօթութիւններով: Հ. Ակիմնանի գրչին են պատկանում նաև «Աւետիս կարուղիկոս էջմիածնեցի» եւ «Սարգիս վարդ-Կաֆացի» աշխատութիւնները: Շարունակում է Պ. Է.-ի «Հայերը մարդասիրական տեսակէտէ» երկարաշունչ ուսումնասիրութիւնը: Ցաւալի է, որ «Հանդէս Ամսօրեա»-ն շատ քիչ ուշադրութիւն է դարձնում հայագիտական մանաւական հորութիւնների արժանագրութեան եւ գրախօսական բաժնի վըրա, որով հանդէսը ստանում է ժողովածուի բնոյք:

Վենետիկեան այս «հանդիսարան»-ում շարունակում ԲԱԶԱՐԱՎԵՊ է Ա. ԵՐԵՄԵՆԻ «Թուսահայ քատրոնի պատմութիւնը» (թիւ 2-3), որի մէջ հաւաքւած է հայ մշակոյրի պատմութեան տեսակէտից խիստ հետաքրքրական նիւր: Այս տարւայ թիւ 1-ից սկսած երտարակում է Ս. Բիւրատի «Լեռնականի մը յուշաները», ուր առ այժմ խօսում է հեղինակի մանկութեան մասին, տրուում է պատկերը այն միջավայրի, (Զեյթում), ուր անցել է Ս. Բիւրատի մանկութիւնը: Յունիւ-փետրհամարում տպած է Հ. Վ. Հացունու «Մովսէս կարենացին կը դառնայ ի եփմագերորդ դար» յօդածի առաջին մասը, ուր յարգելի բանասէրը ամփոփում է Խորենացու ժամանակի մասին եղած տեսութիւնները եւ ձեռնարկում իր տեսակէտի հիմնարկութան: Յունիւ-ի համարում գետեղուած է Հ. Գ. Նահապետի կէս-

յուշագրական գրւածքը ակադ. Մարի մասին: Հ. Ն. Փէշիկեան շարունակուող յօդածով զրադում է «Աստուածաշունչի Բ. քարգմանութեան 1500 ամեակով»: Գրական-քննադատական բաժնում Հ. Ս. Երեմեան շարունակելի յօդածներով քննում է Մ. Պարսամեանի գրքերը:

Միւս նիւրերի վրա կանգ չենք առնի: Առօրեայ, հրապարակագրական բաժնում, ոչ յօրինակ վիճացինների, վենետիկի միխրաբեանները աշխատում են բայց ել ժամանակի հետ եւ զրադել նաև համբային մուքի մշակութեամբ: Հայագիտական տեղեկատութեան տեսակէտից «Բազմավլէպ»-ն էլ, դժբախտարար, պակասաւոր է: Մեր ներկայ պայմաններում միայն միխրաբեանները ի վիճակի են արձանագրելու հայագիտութեան բնագաւառում կատարուող դէպքերն ու պատահած նորութիւնները: Եւ պէտք է որ կատարեն այդ կարեւոր աշխատանքը:

Հայ Արիմների Միուրեան այս ամսագիրը շարունակում է ՀԱՅ ԱՐԻ լոյս տեսնել համեմատարար կանոնար կերպով: Եւ արդէն լրացել է գոյութեան չորրորդ տարին: Վերջին տարւայ համարներում երեւցած նիւրերից առանձնապէս պէտք է նշել Ք. Ֆարշեանի «Հայ Արիի մը պատմութիւնը», ուր հեղինակը տալիս է իր «Երկրէ երկիր» նամբորդութեան յուշերը - Վան, Պարսկաստան, Միջագետք: Յուշերի նիւր են կազմում, ի միջի այլոց, պատերազմական դէպքերը Պարսկաստանում եւ գաղըր դէպի Բաղդադ: Պատամի ընթերցողների համար կան այսուեղ ուսանելի էջեր, որոնք կարդացում են հետաքրքրութեամբ: Յետոյ արծեքաւոր են Ա. ԲՐԵՒՆ ՇԱՆԹԻ յօդածները, որոնք մեծ մասամբ, ծառայում են արքինների բարոյական դաստիարակութեան: Ա. Շանթին յաջողուում է խօսել անպահոյն ու հասկանալի լեզով, մատչելի երեխաների գիտակցութեան: Ապա Ա. Առանազի՝ «Հայաստան աշխարհը», ուր պատամի

ընթերցողներին տարրական տեղեկութիւններ են տրւաւ մեր հայրենիքի մասին։ Մնացած նիւթերը կամ տեղեկատու բնոյք ունին, կամ բարգմանուրիւններ են օտար հեղինակներից, կամ վերաբերում են ոչ - հայկական իրականութեան։ Եւ պէտք է ասել, որ վերջին կարգի նիւթերը բաւական լայն տեղ են բռնում ամսագրում, այն ինչ շեշտը պէտք է դրւէր հայ իրականութեան վըրա։ Հայ անցեալ եւ ներկայ կեանքը շատ զեղցիկ և մասնութենի համար ուսանելի կողմեր ունի, հայոց պատմութեան մէջ կամ շենք դէմքեր, որոնց ծանօթուրիւնը մեր նոր սերնդի համար աւելի անհրաժեշտ է, բան, օրինակ, Հ. Մարքենի երկարապատում յուշերը, որ հայ արին օտար լեզով էլ կարող է կարդալ։ «Հայ Արի»-ն պէտք է լինի ամենից առաջ հայ' արփ, այսիմքն՝ շանայ նոր սերնդին տալ հայկական կրութիւն եւ դաստիարակութիւն, առանց, ի հարկէ, շեղելու եւ միջազգային համերաշխութեան ուղիներից։ Գովելի է, որ մեր արինները ամէն տեղ եւ ամէն ժամանակ աշխատում են օտարների աչքին լաւ կողմից ներկայացրենի հայ ժողովուրդը - եւ այդ նրանց, յանախ, յաջողւում է - բայց աւելի անհրաժեշտ է, որ արիններն իրենք նամաշն հայ ժողովուրդին, հայոց պատմութիւնն ու հայ ներկայ իրականութիւնը, դաստիարակէն ու պատրաստին լաւ հայ բազաքացի դառնալու համար։ «Հայ Արի»-ն այս մասին ֆիշ է մտածում,

Մի դիտողութիւն եւս. «Հայ Արի»-ի մէջ խիստ շեշտած է պէտք անձնական կողմը. համար չի անցնում, որ տրւած չիմի նրա նկարը. խմբագրականները կը բրում են անձնական բնոյք, երբեմն պատահում են տղեղ արտայայտութիւններ։ Օրինակ, վերջին № 12-ի «Բարեկամներ շահինք» խմբագրականի անվայել, արինների վարկին պատիւ չըերող եւ «բարեկամներ շահելուն» բնաւ չնապատող ակնարկները։ Արին իր բարոյական նկարագրով պէտք է հեռաւ լինի ցուցամուռ-

թիւնից, աժան ռէկլամից եւ ինքնազովութիւննից, իսկ «Հայ Արի»-ին իրօք պէտք է լինի հայ արինների ամսագիրը և ոչ այս կամ այն անձի անհատական մըտայնութեան արտայայտիչը։ Ցարգանի դէպի սեփական անձը, բայց եւ յարգանի դէպի ուրիշի համագումանները։

«Մասիս Մանկական Գրադարան»-ը նայնպէս պարբերականներ ԱՐԱՍԻՍ ըի շարքը պէտք է դասւի։ Մինչ շեր ապրիլ արդէն լոյս է տեսել վեց պրակ, որոնց նիւթի ընտրութիւնը կատարած է, ընդհանուր առմանք, յաջող։ Առաջին պրակում որւած են Յ. Թումանեանի «Տէրն ու Շառան», Լ. Շանթի «Քաջ նազարեն»-ը, Դ. Աղայեանի «Ելմտափին Մանուկ»-ը, Գարիելեանի «Արշ»-ը եւ Օրտմանից բարգմանաւծ «Երեք քիրեռնիկ»-ը։ Երկրորդում՝ Յ. Թումանեանի «Սասունցի Դաւիք»-ը։ Երրորդում՝ Ռ. Գարբիելեանի «Մրջիւնները»։ Չորրորդում՝ Գրիմ եղբայրների «Լուսերեսն ու Վարդերեսը» և «Սազարած Աղջիկը»։ Հինգերորդում՝ Յ. Թումանեանի «Ուրախ Հնակարկասով» եւ Լ. Աղամեանի «Ռսկի Աղջիկը»։ Եւ, վերջապէս, վեցերորդում՝ Յ. Ամիշխի «Մօրը համար»-ը։ Մանկական գրականութեան ծանօթ ընթերցողը կը վկայէ, որ բայրն էլ ընտիր եւ սիրած նիւթեր են։ Առանձնապէս պէտք է նշել Գարբիելեանի «Մրջիւնները», որ կենդանի պատմաւծքի ձեւով ներկայացնում է մրջիւնների կեանքը։ Հետեարից աւելի այս կարգի նիւթերն են օգտակար, ինչպէս եւ նաև պարհորդութիւնները։ Նաև հայ անցեալի ու ներկայի պատկերացումը մանուկների համար մատչելի ու հանելի ճեւուլ:

«Մասիս»-ի միմչեւ այժմ լոյս տեսած զրբոյնկները կազմած են խնամքով, երբէ հաշւի չառնենք լեզւական մի խնի քերութիւններ, մանաւանդ, այն նիւթերում, որոնք բարգմանաւծ են արեւելահայերէից, ինչպէս, օրինակ, Յ. Թումանեանի «Սասունցի Դաւիք»։ Մա-

նուկների համար հրատարակւած գրականութեան լեզուն պէտք է լինի պարզ ու հասկանալի: «Մասիս»-ի արտաքինն է՝ բռնը, տիպն ու պատկերները, ընդհանուր առմամբ, գոհացուցիչ են: Երեխանները ունեցող ամէ՛ն հայ ընտանիք պէտք է ունենայ այս հրատարակութիւնը:

### ԳԵՐՄԱՆԵՐԻՆ ՄԻ ՇԱՐԱԹԱՅԹԵՐԹ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԱԿԱՐԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Դիւսելդորֆ (Գերմանիա) հրատարակութ Տիե երանե Post (Թուլի քղաքիր) պատկերազարդ շաբարպերը, որ Ազգային Ընկերվարական կուսակցութեան տարածւած պարերականներից մէկն է, իր 10 փետր. 1935 թ. համարում Վիեննայի Մխիթարեանց եւ ի մասնաւորի նրանց տպարանի եւ հրատարակական գործի մասին տպագրել է մի յօդւած, որ «Եօրանասուն լեզուների վանքը» վերնագիրն է կրում եւ պատկերազարդւած է վամիքն եւ յատկապէս Մխիթարեան տպարանի ու մասնադարանի կենանից առնեած մի ժամի մեծ ու փոքր նկարներով: Յօդւածագիրը գովասանով եւ համականուով է խօսում Եւրոպայի կեդրանում հաստատւած այդ հայ հիմնարկութեան մշակութային դերի եւ ձեռնարկների մասին, իր տեսակում բացառիկ անտառելով մանամդ Մխիթարեան տպարանը, ուր «Եօրանասուն լեզուներով» գրել տպագրել տալ կարելի է:

### Զ. ԱՒԱԼՈՎԻ «ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՌՈՒԹԻՒՆԸ»

«Վէմ»-ի 1934 թ. Դ., Ե. Եւ Զ. գրքերում տպագրել էին յիշեալ գրքի մի հատւածը, «Բարպարմի խորհրդաժողովը», Ա. Արշակունու բարգմանութեամբ: Խմբագրութիւնս այդ առքի դիսել էր, թէ 1923-ին Փարիզում (ուստերէն լեզու) լոյս տեսած եւ «Անդրկովկասի կենանին վերաբերող հարուստ փասու-

րով ու լուսաբանութիւններով յագեցած» այդ աշխատութիւնը «գծքախտաքար հայ հասարակութեան կողմից անցաւ աննկատ, չմայած որ շատ ուսանելի նիւթ էր պարունակում հայերի համար» («Վէմ», Դ. գիրք, 1934 թ.):

Այդ առքի, իբրև լրացում եւ նըշտում պէտք էնք տեսնում արձանագրել, որ Աւալովի գրքի մասին ժամանակին Լանգամանօրէն խօսել է մեր աշխատակից Ա. Արենդեան, անելով նաև բազուծ մներ ու տեղ-տեղ տալով բարգմանութիւններ - («Հայրենիք» ամս., 1926 թ. սեպտ. եւ յաջորդ գրքեր):

### «ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ԳԱՌԱՍՈՒԻՆ ՕՐԵՄԻ»

Ֆրանց Վէրֆէլի այս վէպը մեծ յաջակարիւմ ունեցաւ: Նա արգէն բարգմանաւած է սմզլիերէն, խտալերէն ու չելերէն եւ շուտով պիտի վերածւի շարժապատկերի: Անզլիերէն բարգմանութիւնը լոյս տեսալ երրորդ տպագրութեամբ: Այժմ պատրաստւում է հայերէն բարգմանութիւնը: Սոֆիայի «Մասիս» Հրատ. Ընկերութիւնը յանձնարարել է այդ գործը պ. Եր. Տէր-Անդրէասեանին: Գիրքը ենթադրում է հրաբարակ հանել պրակներով: ամբողջը պիտի լինի երկու հատոր, 1000-1200 էջ եւ արժենալու է բուլգարիա 250 լվ., Ամերիկա՝ 3 դոլար, միւս երկուները՝ 50 ֆր.: «Մասիս» Հրատ. ընկ. հասցեն է՝

K. Haladjian, B. P. 444, Sofia,  
(Bulgarie)

### «ՄՐԳԱՍՏԱՆ»

Արմէն Սեւամի խմբագրութեամբ, Սոֆիայում, շուտով պիտի սկսի հրատարակել «Մրգաստան» անունով մանկական եւ պատանեկան մի հանդէս, որի նպատակն է լինելու՝ «հայ նոր սերունդին սիրցմել իր ազգութիւնը, հայրենիքը ու լեզու»: «Մրգաստան»-ը պիտի հրատարակել երկու շաբարը մի անգամ, տարեկան 20 հատ, ամէն մի գր-

Քոյկ պիտի բաղկանայ 16 էջից եւ պիտի լինի պատկերազարդ: «Մըգաստան»ի տարեկան բաժնեգինը նշանակւած է Յուլյարիայի համար 100 լեվ, Ամերիկա՝ 2 դոլար, միւս երկրները՝ 30 ֆր. Փրանկ: Հասցէն է:

H. Devedjian, 78 Bld. Hristo Botene (Sofia, (Bulgarie)

Խմբազրի ձեռնախառութիւնը մի կողմից, հասունացած պահանջը՝ միւս, իրաւունք են տալիս յուսալու, որ «Մըգաստան»-ի իրօք կարող է դառնալ «հայ մանուկներու եւ պատմիներու սիրելի քերը» եւ լայնօրէն կը տարածւի հայ ընտանիքների մէջ:

### ԱՆԻ

Մամուլի տակ է եւ շուտով լոյս պիտի տեսմէ «Ani» ոռումաներէն ժողովածուն, որ, ինչպէս յայտնում է «Արագ»ը, ունենալու է «քացառիկ ծաւալ ու բացառիկ բոլվարդակուրթիւն»: «Անի»-ի նըպատակն է ներկայացնել ոռումանցիմերին հայ ժողովուրդը իր կենացի բոլոր կողմերով: «Անի»-ին աշխատակցում են հայ, ոռումէն եւ այլ ազգի գրադիներ ու գիտնականներ: Ժողովածուն բաղկանալու է 4 յաջորդական հատորներից: Խւրաքամչիւր հատորի արժէքը նշանակւած է 300 լեյ: Հատորները լինելու են պատկերազարդ, եւ ունենալու են պրոֆ. Ն. Նորգայի յառաջարանն ու հետեւեալ բաժինները: 1. Հայ Յեղը, 2. Հայ մշակոյքը, 3. Հայ արևսար, 4. Հայ լեզուն, 5. Հայ գրականութեան պատմութիւն, 6. Հայ բարքեր եւ սովորութիւններ, 7. Հայ ժողովրդական բանակիւսութիւն, 8. էջեր հայ գրականութիւ-

նից, 9. Հայերը ուրիշ ժողովուրդների կեանում, 10. Օտար հեղինակներ հայերի մասին, 11. Ժամանակագրութիւն Ռումանիայ գաղութի, 12. Ռումանիահայ գաղութի կեանքը, 13. Փաստաբարերի լեզով, , 14. Հայ աղբիւրներ ունեմէն պատմութեան մասին, 15. Ի՞նչ են ասում նոր պեղամները, 16. Նոր գրքեր, 17. Անդարձ բաժնուղներ, 18. Մըշակութային կեանքը Հայաստանում, 19. Ռումանիայ մշակութային կեանքը, 20. Մտաւոր շարժումները ուրիշ հայ գաղութներում:

Բաժանուրդազրիկ կարելի է «Վէմ»-ի միջոցով կամ հետևեալ հասցեավ:-

Red. "Ani", Str Voselor, 8

Bucarest, (Roumanie)

### ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԵԳԻՐՔ

Համազգային Ընկերութեան Կենտրոն Վարչութիւնը ձեռնարկել է գրական - գեղարվեստական եւ պատմական - գիտական մի տարեգրքի հրատարակութեան, որ լոյս պիտի տեսմէ յառաջիկայ նոյները ամսի վերջերը: Այդ նըպատակով կազմած է խմբագրական մարմեն՝ նիւթերի կազմութեան, դասաւորութեան եւ յարակից աշխատանքների համար: Աշխատակիցներն իրենց նիւթերը պետք է ուղարկեն մինչեւ յուլիսի վերջերը: Տարեգրքը լոյս պիտի տեսմէ սահմանափակ թուվ: Վափառողները կարող են նախօրօք բաժանորդագրել՝ վեաբելով 20 եգ. դահեկան: Դրամական առաքումները կատարել դրէ: Օհանշանեանի հասցեով:

Almanach "Hamazkajine",  
B. P. 868, Le Caire, (Egypte)

